ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Դաստիարակ՝ Սարդարյան Մերի

Մանկապարտեզ՝ « Խնձորեսկի ՆՈՒՀ » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. Ուսուցման գործընթացը նախադպրոցական ուսումնական հաստատությունում՝ էքսկուրսիա _____ 5

1.1 Սաների հետ բնապատմական էքսկուրսիաների և մշակութային այցերի անցկացման կազմակերպում և մեթոդիկա _____7

1.2 Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում_____10

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. Ուսումնաճանաչողական էքսկուրսիայի օրինակ՝ իմ աշխատանքային փորձից.

Այց Խնձորեսկի պատմության թանգարան_____14

Պարապմունք_____16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ_____20

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթական համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Նախադպրոցական կրթությունն ամբողջական գործընթաց է, որն ուղղված է՝

ա) նախադպրոցական տարիքի երեխայի բազմակողմանի զարգացման ապահովմանը՝ նրա հակումներին, ընդունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան:

բ) նախադպրոցական տարիքի երեխայի մեջ վարվելակերպի տարրական նորմերի ձևավորմանը:

Ուստի շատ կարևոր է ,թե այս շրջանում երեխային ինչ է պետք սովորեցնել, հաղորդել, և առավել կարևոր է, թե ինչպես, ինչ մեթոդներով ու ձևերով դա անել:

Քանի որ ապրում և աշխատում ենք այնպիսի դարաշրջանում ,որտեղ անընդհատ տեղի են ունենում պատերազմներ, անհրաժեշտություն է առաջանում ավելի մեծ ուշադրություն դարձնել հայրենասիրական դաստիրակությանը՝ երեխաների մոտ դեռևս նախադպրոցական տարիքից սկսած: Դիտարկել այն արդյունավետ եղանակներն ու մեթոդները, որոնց միջոցով նախադպրոցական ուսումնական հաստատությունում կարելի է հայրենիքին, նրա մնայուն արժեքներին ծանոթացնել սաներին, ինչպես նաև նրանց մեջ սերմանել հայրենասիրական զգացմունքներ: Հենց այդպիսի գործունեության ձևերից մեկն էլ էքսկուրսիաներն ու մշակութային այցերն են:

Էքսկուրսիաները զարգացնում, ձևավորում, ամրապնդում են մարդու ճանաչողական, ստեղծագործական կարողությունները: Նա կարողանում է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել և այդ գիտելիքները ճիշտ կիրառել: Էքսկուրսիաներն իրենց կարևոր տեղն ունեն ուսուցման գործընթացն արդյունավետ կազմակերպելու մեջ: Այն կիրառվում է տարրական նախակրթարանից : Յուրաքանչյուր տարիքային խմբում այն ձևավորվում է յուրովի՝ ելնելով տարիքային առանձնահատկություններից:

Նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա հետաքրքրությամբ լի է իրեն շրջապատող աշխարհի նկատմամբ: Այս տարիքում ամեն ինչ հետաքրքիր է երեխային, և հետևաբար երեխայի տարիքային այս առանձնահատկությունը պետք է առավելագույնս ճիշտ օգտագործվի նախադպրոցական ուսումնական հաստատությունում իրականացվելիք կրթադաստիարակչական գործունեության ընթացքում: Հենց այս ժամանակահատվածում է կարևոր երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնել մշակութային արժեքների նկատմամբ, զարգացնել պատկերացումները անձի, հասարակության մասին: Այսպիսի կարողունակությունների ձևավորմանը մեծապես նպաստում են պարբերաբար կազմակերպվող էքսկուրսիաները և մշակութային այցերը: Այսպես նրանք կկարողանան կողմնորոշվել տարածության մեջ, կզարգացնեն իրենց տեսողական դաշտի պատկերացումները՝ շրջապատող իրերի և անձանց նկատմամբ:Էքսկուրսիաները և մշակութային այցերը գործունեության այն ձևերն են, որոնք երեխաներին իսկապես դուր են գալիս:

Իմ հետազոտական աշխատանքի կատարումը նպատակ ունի տեսական նյութի ուսումնասիրմամբ, էքսկուրսիաների և մշակութային այցերի իմ փորձի ներկայացմամբ ևս մեկ անգամ կարևորել գործունեության այս ձևը:

ԳԼՈՒԽ 1. Ուսուցման գործընթացը նախադպրոցական ուսումնական հաստատությունում. էքսկուրսիա

Էքսկուրսիան նախադպրոցական դաստիարակության ճյուղերից մեկն է:«Էքսկուրսիա» բառն առաջացել է լատիներեն «excursio» բառից: Կրթության և դաստիարակության ձևերի և մեթոդների շարքում, երբ ուսումնասիրում ենք որևէ կրթական ծրագիր կամ մեթոդական ձեռնարկ ուղեցույց (հատկապես ռուսական գրականության մեջ), ապա շատ դեպքերում առաջին տեղում էքսկուրսիան է:«Էքսկուրսիա» տերմինի մանրամասն բացատրությունը տալիս է Խորհրդային Մեծ հանրագիտարանը . «Գիտելիքների ընդլայնմանն ու խորացմանն ուղղված զանգվածային մշակութային, կրթական, քարոզչական և կրթական աշխատանքի տեսակներից մեկը երիտասարդ սերնդի…»:[1]

Ռուսաց լեզվի բացատրական բառարանում (ղեկավար՝ Լ. Ն. Ուշակով, 1940) բառը « **էքսկուրսիա**», բացատրվում է՝ որպես «կոլեկտիվ ճանապարհորդություն կամ զբոսանք գիտական, կրթական կամ հանգստի նպատակով»:

Փոքր սովետական հանրագիտարանում ասվում է. «էքսկուրսիան կոլեկտիվ ճամփորդություն է կամ ճամփորդություն դեպի տեսարժան վայրեր գիտական, հանրակրթական կամ մշակութային ու կրթական նպատակներով»:[2]

Որոշ բառարաններում, օրինակ, Համառոտ մանկավարժական բառարանում (1989, էջ 300-310) և ուսումնական նյութերում, էքսկուրսիան համարվում է տեսողական դաստիարակության, ուսուցման և ուսումնական աշխատանքի ձևերից մեկը: Միաժամանակ ընդգծվում է կողմերից միայն մեկի կարևորությունը, այն է, որ էքսկուրսիաները ուսումնական գործընթացը տեղափոխեն շրջակա միջավայրում գտնվող կամ թանգարանում ցուցադրվող առարկաների դիտարկման միջավայր:

---

1. [1] Խորհրդային Մեծ հանրագիտարանը (1933, հ. 63, էջ 316).

2. [2] Փոքր սովետական հանրագիտարան (1960 թ., հատոր 10, էջ 770)

Էքսկուրսիայի էությունը կայանում է ցուցադրման և բացատրման համադրության մեջ: Եթե այդ համադրությունից բացակայի ցուցադրումը, ապա այն կվերածվի պարզապես զրույցի: Իսկ եթե էքսկուրսիան զուրկ լինի բացատրությունից, ապա ցուցադրումն էլ իր հերթին կվերածվի ուղղակի տեսարժան վայրի այցելության:[3]

Ուսուցման կազմակերպման այս ձևը կիրառելի է նաև նախադպրոցական ուսումնական հստատություններում, որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց: Այս տարիքում երեխաներն ունեն զարգացման թաքուն հնարավորություններ, որոնք պետք է դաստիարակը բացահայտի ու զարգացնի: Նախադպրոցական հաստատության կյանքի առաջին տարիներին երեխան սկսում է ադապտացվել իր համար նոր միջավայրին ու կենսակերպին: Եվ հոգեկան շատ որակների հիմքը դրվում է հենց այս տարիքում : Հարստանում է երեխայի մտածելակերպը, վարքը կարող է աստիճանաբար բարդանալ, զարգանում են հոգեկան գործընթացները՝ մասնավորապես ուշադրությունն ու հիշողությունը, որոնք նպաստում են գիտելիքների ձեռքբերմանը: Ամենից լավ երեխաները մտապահում են այն, ինչը մտածական գործունեության առարկա է և նպատակ է հանդիսանում, օրինակ՝ նկարները, գույները, հնչյունները և այլն:

Համառոտ ձևով էքսկուրսիայի էությունը կարելի է սահմանել հետևյալ կերպ. էքսկուրսիան որոշակի ձևով մարդկանց խմբին փոխանցվող գիտելիքների հանրագումարն է և դրանց փոխանցման գործողությունների որոշակի համակարգ:

3. [3] Համառոտ մանկավարժական բառարան (1989, էջ 300-310)

1.1 Փոքր սովորողների հետ բնապատմական էքսկուրսիաների և մշակութային այցերի անցկացման կազմակերպում և մեթոդիկա

Էքսկուրսիան ուսումնական գործընթացի կազմակերպման ձև է՝ ուղղված ուսումնական նյութի յուրացմանը, բայց այն իրականացվում է նախադպրոցական ուսումնական հաստատությունից դուրս:

Էքսկուրսիաների թեմաները բազմազան են. Դրանք կարող են ներկայացված լինել հետևյալ խմբերով.

1. Էքսկուրսիաներ դեպի բնություն (այգի, անտառ,դաշտ)՝ սեզոնային փոփոխությունները, բույսերի և կենդանիների կյանքը ուսումնասիրելու նպատակով:
2. Էքսկուրսիաներ, որոնք երեխաներին ծանոթացնում են սեզոնային աշխատանքին (բերքահավաք, այգեգործություն, տերևների և ձյան մաքրում և այլն);
3. Էքսկուրսիաներ, որոնք ներկայացնում են տարբեր մասնագիտություններ և մարդկանց աշխատանքը (գործարան, գրադարան, թանգարան և այլն):
5.Էքսկուրսիաներ դեպի հայրենի հողի պատմական վայրեր (պատմագեղարվեստական հուշարձաններ, հուշահամալիրներ).

Էքսկուրսիաների համակարգված անցկացումը երեխաների մոտ զարգացնում է իրենց տարածաշրջանն ուսումնասիրելու հետաքրքրություն:

Առանձնացնենք մի քանի կարևոր կետեր, որոնք դաստիարակը պետք է նկատի ունենա էքսկուրսիա կազմակերպելիս և անցկացնելիս:[4]

1. Էմոցիոնալ կողմը. Դաստիրակը պետք է փորձի երեխաների մեջ պահպանել այն հուզական վիճակը, որն առաջանում է էքսկուրսիայով՝ տալով ազատություն: Էքսկուրսիայի ժամանակ չպետք է երեխաների հետ լինել շատ խիստ(«Կանգնիր այստեղ», «Այնտեղ մի նայիր», «Մի փախիր» և այլն) ,պետք է թույլ տալ մի փոքր ժամանակ շփվել դիտարկվող օբյեկտի հետ: Պետք է խուսափել սուր կարգապահական դիտողություններից, պատիժներից և ուղղակի հրահանգներից: Հաղորդակցության ոճը պետք է լինի անպայման վստահելի, փափուկ, անկեղծ:

4. [4] Հայաստանի Հանրապետության Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարություն ՝ նախադպրոցական կրթություն

Հակառակ դեպքում էքսկուրսիան երեխաների վրա էմոցիոնալ բացասական տպավորություն կթողնի:

2. Կազմակերպչական կողմ. Իհարկե, էքսկուրսիա կազմակերպելն ավելի դժվար է, քան ավանդական խմբային պարապմունքի անցկացումը:Դաստիրակը զգուշորեն և նախապես պատրաստում է յուրաքանչյուր էքսկուրսիա. նա որոշում է էքսկուրսիայի թեման, ներկայացումը և հիմնական հասկացությունները, անպայման այցելում է էքսկուրսիայի վայրը՝ ծանոթանալու դրան, ընտրելու ամենահետաքրքիր և բնորոշ առարկաները ցուցադրության համար: Դաստիարակը նախօրոք մտածում է միջոցառման բոլոր պահերի մասին ,որոշում է իր հետ վերցնել օգնական (դայակ, մեկ այլ դաստիարակ, ծնողներից մեկը կամ մի քանիսը):

Էքսկուրսիայի ուղին չպետք է հոգնեցուցիչ լինի երեխաների համար,եթե երեխաներն ի սկզբանե հոգնեն, ապա կկորի նրանց հետաքրքրությունը ծանոթանալուն շրջակա միջավայրին: Պետք է հաշվի առնել նաև եղանակային պայմաններն ու ճանապարհի առանձնահատկությունները: Դաստիարակը ուշադրություն է դարձնում նաև սաների հագուստին, դրանք պետք է համապատասխանեն տարվա եղանակին և վայրին:

Էքսկուրսիա կազմակերպելիս և անցկացնելիս պետք է հիշել, որ նույնիսկ հետաքրքիր տեղեկատվության մեծ քանակությունը հանգեցնում է ուշադրության թուլացման: Առաջարկվում են նախադպրոցական տարիքի երեխաների ուշադրությունը պահպանելու հետևյալ եղանակները.

- Տեսարժան վայրերի ցուցադրում, որոնք պետք է տարբերվեն ճշգրտությամբ, պատկերավորությամբ:

- Տեսողական միջոցների օգտագործում, դրանք օգտագործելիս լսողական ընկալումն անցնում է տեսողականի, ստեղծվում է սթրեսի որոշակի թուլացում:

- Կատակներ, հումոր:

• Հարց-պատասխան[5]

Էքսկուրսիան հետաքրքիր լինելու համար դաստիարակը պետք է պատրաստի բանաստեղծություններ, հանելուկներ, ասածվածքներ, խաղեր:

Դաստիարակը պլանավորում է էքսկուրսիա՝ ելնելով ծրագրի պահանջներից և շրջակա տարածքի առանձնահատկություններից.

• ներածական զրույց

• կոլեկտիվ դիտարկում

• երեխաների անհատական ինքնագործունեություն

• նյութերի հավաքածու

• մանկական խաղեր հավաքված նյութով

• եզրփակիչ մասը:

Պատրաստվելով գալիք էքսկուրսիային դաստիարակը սաներին նախապես տեղեկացնում է էքսկուրսիայի նպատակը, թե ուր են գալու և ինչու, ինչ են պարզելու: Անհրաժեշտ է նաև սաների հետ քննարկում իրականացնել անծանոթ վայրում վարքի կանոնների պահպանման մասին:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է սաներին հնարավորություն տալ բավարարել իրենց հետաքրքրությունը ինքնուրույն և ազատ դիտումներ կատարելով:

Վերջին փուլը արդյունքների ամփոփումն է : Էքսկուրսիան ավարտվելուց հետո, դաստիարակն ու սաները պարտադիր վերլուծում ամփոփում են էքսկուրսիան՝ նաև

5. [5] ,,Դաստիարակի ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում,, Երևան 2011թթ.

կատարում ստեղծագործական աշխատանք (հատկապես բնության էքսկուրսիայի ընթացքում հավաքված նյութերով):

1.2 Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Էքսկուրսիաները երեխաների միտքը հարստացնում են նոր տպավորություններով, հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը, կենդանիները, մարդկային հասարակությունը և մարդու աշխատանքը բնության և հասարակության մեջ:

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման համար :Խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարգանում է, եթե մտքի, առարկայի մասին երեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի: Ու ոչ մի ձևով հնարավոր չէ նոր բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել, որքան էքսկուրսիայի միջոցով, որովհետև այստեղ բառը կապվում է տվյալ հասկացության, իրի կամ երևույթի դիտման ու զննման հետ, դառնում է կոնկրետ ու որոշակի: [6]

Էքսկուրսիան լավագույն նյութ է տալիս ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքի զարգացման ու մշակման համար:Փորձը ցույց է տալիս, որ երեխաները ամենից ավելի հաջող շարադրում են իրենց միտքը էքսկուրսիաների վերաբերյալ, որովհետև նյութի կոնկրետությունն ու տպավորությունների անմիջականությունը պատկերավոր է:

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև դաստիարակչական տեսակետից: Դրանք երեխայի մեջ զարգացնում են

6. [6] Յու. Ամիրջանյան, «Մանկավարժություն», Երևան, 2005 թ.

ուշադրություն ու դիտողունակություն, մշակում են գիտակցական կարգապահություն ու կազմակերպվածություն:

Էքսկուրսիաների միջոցով երեխան ծանոթանում է երկրի մակերևույթի ձևերին, զգում հայրենի բնության գեղեցկությունը և ամենից շատ սիրում ու գնահատում այն:Էքսկուրսիայի ժամանակ զարգանում է նաև երեխաների էսթետիկական ճաշակը, նրանք կարողանում են գեղեցիկը տեսնել ամեն տեղ՝ բնության մեջ, կյանքում և աշխատանքում:

Էքսկուրսիայի ընթացքում ձևավորվում են շատ բարոյական նորմեր՝ ընկերասիրություն, կոլեկտիվիզմ, փոխօգնություն և այլն:

Էքսկուրսիայի ժամանակ երեխաները ձեռք են բերում բնավորության այնպիսի գծեր ինչպիսիք են համառություն, շրջապատում կողմնորոշվելու ունակություն, դժվարությունները հաղթահարելու կամք: Էքսկուրսիայի ժամանակ բացահայտվում է երեխայի բնավորությունը, նրա շատ ընդունակություններ ի հայտ են գալիս: Դրանից ստացած տպավորությունները պահպանվում են ավելի երկար: Եվ պատահական չէ, որ ասում են լավ է մեկ անգամ տեսնել, քան տասն անգամ լսել: Երեխաների գիտելիքներն ավելի կայուն կդառնան, երբ էքսկուրսիայի ժամանակ իրենց աչքով տեսնեն և դրան զուգահեռ նաև լսեն :Էքսկուրսիայի ժամանակ շատ երևույթներ երեխաները կարող են տեսնել, բայց չհասկանալ, այս գործում օգնության է գալիս դաստիարակի բացատրությունը, որը կարող է ինչպես նախորդել, այնպես էլ զուգակցել ու հաջորդել էքսկուրսիային:Գիտելիքների ընկալմանը հաջորդող էքսկուրսիան նպաստում է երեխաների նախօրոք ստացած գիտելիքների ամրապնդմանը, իսկ թեմային նախորդող էքսկուրսիան հիմք է հանդիսանում նոր գիտելիքների ընկալման համար, նախնական տվյալներ են հավաքում այս կամ այն թեման յուրացնելու համար: Էքսկուրսիաները նաև զարգացնում են շարժողական ակտիվությունը:

Դաստիարակում. գործունեության այս ձևը նպաստում է սաների բարոյական, հայրենասիրական դաստիարակությանը, ձևավորում հուզական արձագանք շրջապատի և դրանում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ:

Էքսկուրսիաները ձևավորում են նաև վարքի ճիշտ դրսևորումներ դրսում, հասարակական վայրերում, դաստիարակի կարգադրություններին հետևելու և կատարելու ունակություններ:[7]

Նախադպրոցական տարիքի սանի զարգացման համար շատ կարևոր է էքսկուրսիաների բոլոր տեսակների կիրառումը, քանի որ դրանց համադրումը բերում է համակողմանի զարգացման:

Զբոսանք մանկապարտեզում. Թերևս առաջին էքսկուրսիան, որն առաջարկվում է նախադպրոցականներին (սովորաբար կրտսեր առաջին և երկրորդ խմբի սաներին) շրջագայությունն է նրանց մանկապարտեզի տարածքում: Այս էքսկուրսիան սաներին սովորեցնում է կողմնորոշվել տարածքում, ծանոթացնում է հաստատության կառուցվածքին:Սովորաբար երեխաներին ցույց են տալիս այգին,խաղահրապարակը, խոհանոցը, բժշկական սենյակը, և այլն՝ նախադպրոցականների ուշադրությունը հրավիրելով աշխատանքային գործիքների, պարագաների ու իրերի վրա:

Բնության էքսկուրսիաներ. Բնության էքսկուրսիաները նպատակ ունեն նախադպրոցականներին ծանոթացնել բնաշխարհին, կուտակել պատկերացումներ նրա տարբեր երևույթների մասին:

Ինչպես հայ մեծ մանկավարժ Խ. Աբովյանն է նկատել « Բնությունն իր բազմապիսի առանձնահատկություններով ու երևույթներով , իր պես-պես գույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառահետևանքային զանազան կապերով, իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցչին է:Այդ ուսուցիչն ամենահեշտ ու դյուրին ձևով խոր ու կայուն կերպով սովորեցնում է ճանաչել բնությունը»:

Մշակութային այցեր. Բնության էքսկուրսիաներից ոչ պակաս կարևոր են նաև մշակութային այցերը եկեղեցիներ, թանգարաններ, հուշարձաններ, գրադարաններ, երաժշտական դպրոցներ, որոնք ընդլայնում են սաների մտահորիզոնը, սովորեցնում հասկանալ և գնահատել արվեստը, ինչպես նաև ճանաչել հայրենի երկրի պատմությունը: Եկեղեցիները, թանգարանները, գրադարանները կամ

7. [7] Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան 2014 թ

գեղարվեստի դպրոցները մշակութային արժեքների պահպանման, անցյալի հիշողությունը, օգտակար տեղեկությունները սերնդեսերունդ փոխանցելու միջոց են, իսկ մենք մենծերս պարզապես պարտավոր ենք պահպանել և փոխանցել գիտելիքներն ու մշակութային արժեքները մեր սաներին:

Արտադրական էքսկուրսիաները սաների մոտ զարգացնում են հետաքրքրություն տարբեր մասնագիտությունների նկատմամբ, խթանում հարգալից վերաբերմունք գործարանների և այլ հաստատությունների աշխատողների աշխատանքի նկատմամբ: Այս այցը սաներին հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչ է աշխատանքային պատասխանատվությունը: Արդյունաբերական էքսկուրսիաները շատ կարևոր են նաև հայրենասիրական առումով, երեխաները՝ սկսում են հպարտանալ իրենց երկրով:

Այսպիսով՝ էքսկուրսիաները և մշակութային այցերը սանի գեղարվեստաստեղծագործական և ճանաչողական մտածողության ձևավորմանը նպաստող գործունության ձևերից են: Անկախ նրանից, թե ինչ բնույթ են կրում էքսկուրսիաներն ու մշակութային այցերը, դրանք օժտված են բարձր ազդեցությամբ և արդյունավետությամբ: Դրանք ընդլայնում են աշխարհընկալումը, հարստացնում ճանաչողական գիտելիքները, զարգացնում բառապաշարը, ձևավորում հետաքրքրասիրությունը, ինքնաճանաչումը՝ ինքնագործունեությունը և նախաձեռնողականությունը, դաստիարակում են սեր դեպի բնությունը, դեպի հայրենի երկիրը, դրանց տեսարժան վայրերը, հուշարձանները ձևավորում են գեղագիտական ճաշակ, նպաստում են միջնանձնային հարաբերությունների ձևավորմանը:

էքսկուրսիաներն նաև այնպիսին հրաշալի միջոց են, որի օգնությամբ կարելի է, շատ լավ դիտարկել և շտկել երեխաների վարքի խնդիրները, որոնք միշտ չէ, որ տեսանելի են սովորական պարապմունքների ժամանակ: Սա հիանալի միջոց է սաների դիտարկման և գնահատման մեթոդը կիրառելու համար: Էքսկուրսիայի ընթացքում՝ տեսանելի են յուրաքանչյուր սանի և ամբողջ մանկական թիմի առանձնահատկությունները: Հենց էքսկուրսիայի ժամանակ, երբ երեխաները չեն գտնվում իրենց սովորական միջավայրում կարելի է նկատել նան դաստիարակի

մասնագիտական գործունեության թերությունները, գնահատել՝ մանկավարժական վարպետությունը:

ԳԼՈՒԽ 2. Ուսումնաճանաչողական էքսկուրսիայի օրինակ ՝ իմ աշխատանքային փորձից.

Այց Խնձորեսկի պատմության թանգարան

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակվում ենք այնպիսի տարածաշրջանում, որտեղ ամեն քայլափոխի պատմամշակութային արժեքներ ներկայացնող հուշակոթողներ են՝ այս անգամ էքսկուրսիա կազմակերպեցինք դեպի Խնձորեսկի պատմության թանգարան և հարակից այգի:

Այցը բավականին բովանդակալից էր և ուսուցողական: Սաները ծանոթացան հայրենի բնությանը, մեծ խանդավառությամբ զբոսնեցին թանգարանի տարածքում: Փոքրիկների համար պատրաստվել էր փոքրիկ իրազեկող դասախոսություն՝ իրենց բնակավայրի պատմության մասին: Փոքրիկները մեծ ուշադրությամբ լսեցին:

Խնձորեսկի պատմության թանգարանը հիմնադրվել է 1968 թվականին: Տարիների ընթացքում այստեղ կուտակված ցուցանմուշներն այսօր պատմում են Խնձորեսկի պատմության, ինքնատիպ կենցաղի ու բարքերի մասին, որով էլ սկսեցինք մեր զրույցը փոքրիկ սաների հետ: Այստեղ ներկայացված է 18-19-րդ դարերի Խնձորեսկի կենցաղը, խնձորեսկցիների հագուկապը, գյուղատնտեսական գործիքներ, զենքեր, լուսանկարաներ:[8] Թանգարանի համեստ տարածքում մեկտեղված ցուցանմուշներն այսօր սպառիչ ու բավականին պատկերավոր ներկայացնում են պատմական Խնձորեսկը:

8. [8] Հայաստանի Հանրային ռադիո ՝ Խնձորեսկի պատմության թանգարանի հետաքրքիր ցուցանմուշները

Աստիճանաբար մեր զրույցը տարանք հայրենասիրական արժեքների ուղղությամբ, ինչպիսին է, օրինակ՝ սերը և հարգանքը մեր հայրենիքի, նրա պատմության, հոգևոր ու մշակութային ժառանգության նկատմամբ: Ուրախալի էր տեսնել, որ ոգևորությունը գնալով համակում էր բոլորին, և որ նրանք կարևորում էին ոչ միայն սերն ու հարգանքը, այլև պատասխանատվության զգացումը հայրենիքի հանդեպ: Իրենց մանկական պարզունակ տրամաբանությամբ նրանք, այնուամենայնիվ, կարևորում էին հայրենիքին որևէ կերպ օգտակար լինելու հանգամանքը: Սաները, դառնալով հետազոտողներ, շրջեցին թանգարանում և նրա հարակից այգում միաժամանակ ծանոթանալով նաև մեր անկրկնելի բնությանն ու նրա առանձնահատկություններին : Նշենք, որ մինչ այցելությունը, ուսումնական պարապմունքի ժամանակ նույնպես նրանց տրվել էր տեղեկատվություն թանգարանի ու այգու մասին, ուստի էքսկուրսիայի ողջ ընթացքում հնչող հարցերը տրամաբանված էին ՝հաշվի առնելով վերջիններիս մոտ թեմայի առնչությամբ նախագիտելիքների առկայությունը: Երեխաները մեծ ուշադրությամբ դիտում էին թանգարանում ցուցադրված նմուշները:Նրանք մեծ ուրաձությամբ լուսանկարվեցին և լավ ժամանակ անցկացրին:

Հաջորդիվ բնության գրկում ժամանցի ընթացքում, սաների հետ խմբային քննարկումներ ու տարատեսակ հետաքրքիր խաղեր կազմակերպեցինք :

Այսպիսով՝ կարող ենք պնդել, որ մեր նախնական նպատակին մենք հասանք: Նմանօրինակ այցերն ու էքսկուրսիաները պետք է կրեն հաճախակի բնույթ, որպեսզի մատաղ սերունդը էլ ավելի մոտենա մեր մշակույթին, ավանդույթներին ու պատմությանը:

Պարապմունք՝ Խոսքի զարգացում

Տևողությունը՝ 20-25 ր.

Թեման՝ Այց պատմական թանգարան և հարակից այգի ***Պարապմունքի տեսակը՝*** զրույց

Նպատակը՝ Ճշտել և ամրապնդել երեխաների պատկերացումները թանգարանի մասին: Սերմանել սեր և հետաքրքրություն մեր պատմության հոգևոր ժառանգության նկատմամբ:Պահպանել կանոնները հասարակական վայրում, լինել հետևողական:

Ակնկալվող վերջնարդյունքը՝ Կամրապնդվեն երեխաների պատկերացումները թանգարանի մասին, նրանց մեջ կսերմանվի սեր և հետաքրքրություն մեր պատմության հոգևոր ժառանգության նկատմամբ, հասարակական վայրում կպահպանվեն կանոնները և կլինեն հետևողական:

Անհրաժեշտ պարագաներ

Ցուցադրական՝ Պատերազմի մասնակիցների նկարներ, աշխատանքային հին գործիքներ, կենցաղային հին իրեր, գորգեր, հին թղթադրամներ, հուշամեդալներ:

Կապը չափորոշչի հետ՝ ԽՀ(գ,թ), Ի(բ,ե)

Կարողունակությունը՝ Լեզվական և հաղորդակցական , ճանաչողական և մոտիվացիոն, մշակութային:

Պարապմունքի ընթացքը՝

Պարապմունքն սկսվեց, երբ երեխաները դաստիարակի հետ մտան թանգարան :

Խթանում՝

Երեխանե՛ր, ո՞վ կարող է ասել՝ որտեղ ենք մենք գտնվում: Ինչո՞վ է այս վայրը տարբերվում մեր մանկապարտեզից: Նայե՛ք ձեր շուրջը և ասե՛ք, թե ինչ եք տեսնում այստեղ:Երեխանե՛ր, մենք այժմ գտնվում ենք Խնձորեսկի պատմության թանգարանում: Իսկ դուք գիտե՞ք՝ ինչ է թանգարանը, ինչու ենք մենք այցելում թանգարան և ինչ է պահվում թանգարանում:

Իմաստի ընկալում՝

Երեխանե՛ր, թանգարանը մի վայր է, որտեղ պահպանվում են, ուսումնասիրվում և հավաքագրվում են մեր նախնիներից մնացած նյութական , հոգևոր և մշակութային իրերը: Այստեղ պահվում են խնձորեսկցիների հագուստը, լուսանկարներ, կենցաղային հին իրեր, որոնք մեծ նշանակություն ունեն մեր տարածաշրջանի համար: Թանգարանում ցուցադրված են աշխատանքային հին գործիքներ, որոնց միջոցով հին ժամանակներում մարդիկ մշակել են հողը, վաստակել իրենց ապրուստի միջոցը: Կավից , պղնձից պատրաստված կուժ ու կուլան, ճախարակը, փայտե իլիկը, սանդերքը, խմոր հունցելու համար փայտե տաշտը, գրտնակը, երկանքը, խնոցին, օրորոցը , պղնձե թաղարը և այլն պատմում են հին ժամանակներում խնձորեսկցու ապրած կյանքի մասին: Թանգարանում պահվող <<Խնձորեսկ>> գորգը ի սկզբանե չի ծառայել որպես կենցաղային իր, այլ ունեցել է ծիսապաշտամունքային նշանակություն:Թանգարանի մի անկյունում պահվում են տարբեր ժամանակներում զոհված խնձորեսկցի հերոսների լուսանկարները:

Ֆիզկուլտդադար՝

Խաղ՝ <<Լապտերները վառվեցին, լապտերները հանգեցին>>

Լապտերները հանգեցին հրահանգի ժամանակ երեխաները կքանստում են, ձեռքերը բռունցք դարձնում: Լապտերները վառվեցին հրահանգի ժամանակ ուղիղ կանգնում են, ձեռքերը դեպի վեր պարզում, բռունցքները՝ բացում:

Կշռադատում՝

Երեխաներին հարցնել, թե ինչ տեսան թանգարանում, ինչը ամենաշատը հավանեցին: Երեխաների պատասխաններից պարզվեց, որ թանգարանում ամեն ինչ շատ հետաքրքիր էր:

Երեխաները տպավորված էին, թանգարանի ամեն անկյունը նրանց մեջ մեծ հետաքրքրություն էր առաջացնում, նրանք մեծ սիրով և ուշադրությամբ զննում էին ամեն իր: Երեխաները ցանկություն հայտնեցին այցելել Հայաստանի այլ թանգարաններ:

Այցը Խնձորեսկի պատմության թանգարան բովանդակալից էր և ուսուցողական : երեխաները հասկացան,թե ինչ պայմաններում են ապրել մարդիկ հին ժամանակներում, ինչով են զբաղվել, ինչպիսին է եղել նրանց կենցաղը: ՈՒրախալի էր տեսնել երեխաների ոգևորությունը, նրանց հետաքրքրությունը սահմաններ չուներ: Խնձորեսկի պատմության թանգարանից հետո երեխաները շրջեցին թանգարանի հարակից այգում , մաքուր օդում կիսվեցին իրենց ստացած տպավորություններով, գիտելիքներով և նոր տեղեկություններով: Սաները, բնության գրկում ժամանց ու հանգիստ վայելելուն զուգահեռ ձեռք բերեցին նաև շատ կարևոր գիտելիքներ հետևյալ հարցերի շուրջ՝

- Որտե՞ ղ ենք մենք գտնվում:
- Սա ՀՀ ո՞ ր մարզն է:
- Ի՞ նչ գիտեք Խնձորեսկի մասին:
- Ե՞ րբ է այն կառուցվել:
- Ի՞ նչ է թանգարանը:
- Ինչու՞ ենք մենք՝ հայերս, այցելում թանգարաններ:
- Ի՞ նչ սովորեցիք այսօր:
- Ի՞ նչն ամենաշատ հետաքրքրեց :
- Կցանկանայի՞ ք կրկին այցելել այստեղ:
- Սիրու՞ մ եք ձեր հայրենիքը:

Դիտարկողները դիտարկեցին՝

Տնօրեն

Ավագ խմբի հերթական պարապմունքն անցկացվեց Խնձորեսկի պատմության թանգարանում: Թանգարանը հագեցած էր թանգարանային բազմաթիվ ու բազմապիսի նմուշներով, որոնք միանգամից գրավեցին փոքրիկ այցելուներին:Այցը Խնձորեսկի պատմության թանգարան ուսուցողական էր և դաստիարակչական: Պարապմունքը նպաստեց երեխաների համագործակցության, հաղորդակցության մշակույթի զարգացմանը: Պարապմունքի ժամանակ զարգացան ավագ խմբի

երեխաների ճանաճողական գործունեությունը, երևակայությունը, ուշադրությունը, հաղորդակցման հմտությունները: Դաստիարակը հասավ պարապմունքի նպատակին: Պարապմունքի ընթացքում երեխաները ցուցաբերեցին մեծ ակտիվություն,ոգևորությամբ կատարում էին դաստիարակի հանձնարարությունները: Պարապմունքի թեման համապատասխանում է ծրագրին և պլանավորմանը: Երեխաները մեծ տպավորություններով վերադարձան մանկապարտեզ:

Դաստիարակ

Նախադպրոցական տարիքը անհատականության ձևավորման կարևորագույն շրջան է: Բոլոր տեսակի էքսկուրսիաները զարգացնում են նախադպրոցականների ուշադրությունը:Էքսկուրսիաները ունեն դաստիարակչական լայն հնարավորություններ , զարգացնում են երեխաների աշխարհաճանաչությունը, խմբային աշխատանքի հմտությունները: Պարապմունքն անցկացվեց Խնձորեսկի պատմության թանգարանում: Դաստիարակը հասավ պարապմունքի նպատակին: Պարապմունքի ընթացքում երեխաները ցուցաբերեցին մեծ ակտիվություն, ոգևորությամբ լսում էին , թե հինժամանակներում նորածին երեխաները ինչ օրորոցում էին քնում: Պարապմունքի թեման համապատասխանում էր ծրագրին և պլանավորմանը: Էքսկուրսիայից հետո երեխաները վերադարձան մանկապարտեզ մեծ ոգևորությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունում էքսկուրսիաները և մշակութային այցերը մանկավարժական գործընթացի կարևոր մասն են: Ուստի հենց այս տարիքը բավականին նպատակահարմար է երեխային ծանոթացնել հայրենիքին, սիրել տալ իր տունը, քաղաքը, երկիրը հայրենակիցներին: Հենց այս ամենի ամբողջությունն է, որ անվանում ենք հայրենասիրություն: Եթե նպատակ է դրվում սաների մեջ ձևավորել նվիրական զգացումներ հայրենիքի հանդեպ, ապա չպետք է բացառապես բավարարվել խմբասենյակում իրականացվող ուսումնական պարապմունքներով: Այս համատեքստում իրենց կարևորագույն առաքելությունն ունեն էքսկուրսիաները, թեմատիկ այցերը, զբոսանքները, որոնց շնորհիվ նախադպրոցականը ճանաչում է իր հայրենիքը, մոտիկից շփվում հայրենիքի կարևոր արժեքների հետ, պատկերացում կազմում մշակույթի, արվեստի, ազգային ավանդույթների մասին:

Էքսկուրսիան պլանավորում, կազմակերպում է դաստիարակը, ում մեկնաբանմամբ սաները սովորում են ճիշտ ընկալել տեսածը, ցուցադրածը:Էքսկուրսիաների ժամանակ ստացվող տեղեկատուն լինում է առավել տպավորիչ, հուզական, մնայուն, որովհետև փոխանցումն իրականացվում է անմիջական շփման և հաղորդակցման միջոցով: Սաների հետ ցանկացած էքսկուրսիա, լինի թանգարան, գրադարան, դպրոց, այգի, պուրակ, արտադրամաս երեխաների համար դառնում է հիշարժան իրադարձություն: Չէ՞ որ այն սովորական առօրյայի համեմատությամբ բերում է բազմազանություն՝ տալով և՛ գիտելիքներ, և՝ տպավորություն: Էքսկուրսիան սաների համար ոչ միայն հետաքրքիր ժամանակ է, այլ նաև ուսումնադաստիարակչական գործունեություն: Շնորհիվ էքսկուրսիաների երեխաներն ավելի լիարժեք են ճանաչում իրենց շրջապատող աշխարհը: Արդյունքում նախադպրոցական տարիքի երեխաների մոտ զարգանում են տարբեր զգացմունքներ, գեղագիտական ճաշակ, դաստիարակում են հարգանք ուրիշների աշխատանքի նկատմամբ, հայրենիքի նկատմամբ, բնությունը գնահատելու և պաշտպանելու ցանկություն, ընդլայնում են սաների մտահորիզոնը ձևավորում աշխարհայացը, նպաստում խոսքի զարգացմանը:

Հետազոտական աշխատանքների ժամանակ վերլուծելով իմ գործունեությունը՝ ես եկա այն եզրակացության , որ էքսկուրսիաները շատ են օգնում երեխաների ինքնաարտահայտման , ինքնադրսևորման հարցերում,իսկ դաստիարակներ ն ավելի լիարժեք են ճանաչում իրենց սաներին :

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարություն ՝ նախադպրոցական կրթություն
2. Խորհրդային Մեծ հանրագիտարանը (1933, հ. 63, էջ 316).
3. Համառոտ մանկավարժական բառարան (1989, էջ 300-310)
4. Փոքր սովետական հանրագիտարան (1960 թ., հատոր 10, էջ 770)
5. ,,Դաստիարակի ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում,, Երևան 2011թթ.
6. Հայաստանի Հանրային ռադիո ՝ Խնձորեսկի պատմության թանգարանի հետաքրքիր ցուցանմուշները
7. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան 2014 թ
8. Յու. Ամիրջանյան, «Մանկավարժություն», Երևան, 2005 թ.